

Բ Ա Ն Ա Լ Ի Բ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՅ

(Տես երես 93)

Գ. — Կայծակ և Փայլակ :

Ա. Բնութիւն և երևոյր կայծակի : — Մրրիկ :

192 Ի՞նչ է կայծակն : — Կայծակն ուրիշ բան չէ՝ բայց եթէ ուժգին ելեքտրական կայծ մը, որ երկու ամպեր, կամ ամպ մը և երկիրս իրարու հետ կը հաղորդակցէ :

193 Քանի՞ տեսակ կայծակ կայ : — Ինչպէս որ երկու տեսակ ելեքտրականութիւն կայ, այսպէս ալ երկու տեսակ կայծակ կայ :

194 Ի՞նչ է փայլակին պատճառն : — Այս ելեքտրականութիւններէն մէկն է, որ կը փախչի ամպէ մը՝ հաւասարակշռուելու համար ուրիշ ամպի մը կամ երկիրս մէջ եղած ելեքտրականութեան հետ :

195 Ի՞նչ կը պատճառեն երկու ելեքտրականութիւններն՝ երբ մէկմէկու հանդիպին : — Երկուքն ալ կը փոխուին, չէզոք կ'ըլլան, և իրարու խառնուելու ատեն կը պատճառեն ճայթիւն մը :

196 Ի՞նչ է մրրիկն : — Մթնոլորտի անհաւասարակշռութիւն մը, հաւաքեալ ելեքտրականութենէ առաջ եկած ճայթիւնէն պատճառած :

197 Ամպոց մէջ հաւաքուած ելեքտրականութեան աղբիւրը ո՞րն է : — Նախ երկիրս մակերևութին վրայ եղած ջրերուն շողիացումը : — Բ. Քիմիական այլալուծիւնները՝ որ կը հանդիպին գետնի վրայ, ինչպէս մթնոլորտին մէջ : — Գ. Օդուն մէջ շփումները որ կ'ըլլայ երբ զանազան բարեխառնութեամբ ընթացք օդոց իրարու քովէ կ'անցնին :

198 Երկրէս ո՞րչափ բարձր կը գտուին ելեքտրական ամպերն : — Մրրկալից ամպերուն բարձրութիւնը 2000էն ինչուան 5000 մետր կ'ըլլայ . բայց քիչ անգամ կը պատահի որ կայծակը երկիրս հանդիպի՝ եթէ ամպ մը անոր մակերևութէն 600 մետրէն աւելի հեռու է :

199 Ի՞նչպէս ճանչցուեցաւ ելեքտրականութեան և կայծակին նոյնութիւնը : — Այս բանիս հաւանականութիւնը ցուցեր էր Պրանքլին 1749ին, յետոյ 1752ին Պաղ-

ղիոյ մէջ եղած փորձ մը երկաթէ ձողի մը վրայ՝ հաստատեց ճշմարտութիւնը :

200 Ինչո՞ւ համար երբեմն փայլակին ծայրը երկժանիի ձևով կը բաժնուի : — Այս բաժանումը կ'ըլլայ երկրիս վրայի առարկաներէն՝ որոնց կը մօտենայ :

201 Ե՞րբ ուղիղ կ'ըլլայ փայլակը : — Երբ որ կտրած միջոցը պղտիկ է . որովհետեւ այն ատեն իր անցքին վրայ եղած օդը բաւական խիտ չըլլար զայն ետ դարձնելու համար :

202 Ինչո՞ւ համար փայլակը սովորաբար կը զծագրուի թիւրաթեք կտրած գծի մը ձևով : — Որովհետեւ շարժման մէջ կայծակը կը խտացընէ զօդը, և անցք կը բանայ այն կողմերէն՝ ուր որ աւելի նուազ ընդդիմութիւն գտնայ :

203 Ինչո՞ւ համար երբեմն փայլակը կը պատճառեն մեծ փայլում մը՝ որ կը լուսաւորէ հորիզոնին մէկ մասը, և բոլորովին բորբոքած կ'երևցընէ : — Այս երևոյթս առաջ կու գայ երբ փայլակներն ամպերուն վրայ կը ցոլանան, և բուն փայլակներն մեզի չեն երևնար :

204 Ուրիշ ի՞նչ ձև կ'առնուն փայլակը : — Երբեմն ալ կ'երևան լուսաւոր բոլորակի ձևով, որ մթնոլորտին երեսէն կը սահին քանի մը րոպէ :

205 Ինչո՞ւ համար կայծակը օդուն վրայ բոց մը կը ցուցընէ : — Որովհետեւ օդը ամենեին հաղորդիչ չէ, և հետեւաբար չի կրնար կայծակը երկրիս վրայ բերել առանց մեզի երևցընելու :

206 Եթէ կայծակը անցնի աղէկ հաղորդիչ մը՝ լոյս չ'ո՞ւնենար : — Ոչ, այն ատեն ելեքտրական հեղուկը կ'անցնի աղէկ հաղորդիչէն առանց ճայնի և առանց երևնալու :

207 Ինչո՞ւ համար կայծակէն ետև սովորաբար յորդ անձրև մը կու գայ : — Որովհետեւ այն աստիճան կը փոփոխէ մթնոլորտին հաւասարակշռութիւնը՝ որ օդը չի կրնար առջի վիճակին մէջ կախուած կեցընել ջրոց քանակութիւնը . և աւելցածը կ'ինջնայ յանկարծաթափ անձրևի ձևով :

208 Ինչո՞ւ համար կայծակին հետ սովորաբար հով ալ կ'ըլլայ : — Որովհետեւ օդուն բնական վիճակը կը վրդովի կայծակին անցնելէն, և հովը այս վրդովման հետևանքն է :

209 Ինչո՞ւ համար կայծակին անցքը կը վրդովէ մթնոլորտին բնական վիճակը : — Որովհետեւ ելեքտրականութիւնը ջրային շոգիները կը փոփոխէ ի ջուր :

210 Բայց ի՞նչպէս կ'ըլլայ որ այս ջրային շոգւոյն փոփոխութիւնը հով պատճառէ :

— Նախ որովհետև այն վայրկեանին որ կը հետևի չոգույն խտութիւնը՝ մթնոլորտին բարեխառնութեան մէջ անհաւասարակութիւն կ'ըլլայ: Բ. Շոգին աւելի մեծ միջոց կը բռնէ քան թէ ջուրը. ուրեմն օդը կը վազէ լեցրնելու չոգիէն մնացած պարապ տեղը, և կը պատճառէ հոսանք մը, որ է հովն:

211 Ի՞նչ են՝ չերմոքեան փայրակը և սուածներն: — Առանց որոտման կայծակներ են որոնք յաճախ կ'երևան հորիզոնին վրայ ամառուան գեղեցիկ իրիկունները:

212 Ինչո՞ւ համար որոտմունք չըլլար ջերմութեան փայլականց ատեն: — Որովհետև ասոնք միայն ցոլացումն են այն փոթորիկներու փայլատականց՝ որ կ'ըլլան մեր հորիզոնէն վար եղած տեղուանք, և որոտման ձայնը կը կորսուի մեր ականջին չհասած:

213 Կայծակը արդեօք երկրէս ալ ամպերուն վրայ կ'անցնի: — Այո, երկու ելեքտրականութիւններէն մէկը կը ցատրէ գէպ 'ի ամպերը, երբ որ մէկալը ինկնի երկրիս վրայ: (Երկրիս կայծակը կը կոչուի սովորաբար ընդդիմահար):

214 Երկու ելեքտրականութիւններէն որն է ամպերէն ելածը: — Գրեթէ միշտ զրական ելեքտրականութիւնն, բայց երբեմն ալ ժխտականն:

215 Երկրէս ելած ելեքտրականութիւնն որն է: — Սովորաբար ժխտականը, բայց երբեմն ալ զրականը:

216 Տարւոյն որ եղանակին մէջ փայլակք աւելի յաճախ կ'ըլլան: — Ամենէն աւելի ամառուան մէջ, շատ հեղ աշնան ալ, գարնան ատեն քիչ, ամենէն քիչ ձմեռուան մէջ:

217 Ի՞նչ պատճառաւ ամառուան և աշնան մէջ փոթորիկք աւելի յաճախ կը պատահին քան թէ գարնան և ձմեռուան: — Որովհետև առջի երկու եղանակներուն մէջ տաքութիւնը կը պատճառէ շարունակ շոգիացումն. ջուրին շոգիանալուն վիճակն ալ միշտ ելեքտրականութիւն կը պատճառէ:

218 Ինչո՞ւ համար սովորաբար շատ չոր եղանակէ մը վերջը կը հետևին մրրիկներ: — Որովհետև չոր օդը գէշ հաղորդիչ է. չիկրնար կամաց կամաց բերել ելեքտրականութիւնը ամպերէն, ելեքտրական հեղուկը կը հաւաքուի հոն, ինչուան որ ա-

նոնք արձրկեն դայն զօրաւոր ճայթիւններով:

219 Ինչո՞ւ սովորաբար անձրևոտ եղանակին մրրիկ չըլլար: — Որովհետև խոնաւ օդը ինչպէս նաև անձրևը, բաւական ազէկ կը բերեն ելեքտրականութիւնը և ելեքտրական հեղուկը, աստիճանաբար կամաց և առանց ձայնի կու գայ երկրիս վրայ:

ՀԵՏԱՔՐԻՐԱԿԱՆՔ

Նորաւոր:

— 1853ին հաստատուեցաւ 'ի Ռուսիա առաջին հեռագրական թելը՝ ընդ մէջ Աէն-Բէթերսպուրկի, Մոսքուայի և Վարսովայի միւս կողմը: Այն ժամանակէն 'ի վեր առևսական ցանցը բոլոր կայսրութեան գլխաւոր քաղաքները մէկմէկու հետ միացուց: 1868ին ըստ առևսական մղոնին (500 կանգնաչափ), թելին երկայնութիւնն էր 61, 450 և 123 կայսրան ունէր: Այս շինուած հեռագրական թելերուն մէջ ամենէն կարևորն է որ կ'երթայ յԱմերիկա անցնելով Սիպերիայէն, և որուն կատարումը 1870էն առաջ չլուսացուիր: 1865ին Պարսկաստանի հետ հաղորդակցութիւն մը հաստատուեցաւ. իսկ հիմա Հնդկաստանի վրայ ալ սկսան ձգել, հեռագրական կայսրան մ'ալ հաստատուեցաւ 'ի Բէքին՝ ընդդէմ չինական կառավարութեան յայտնի ընդդիմադրութեանը:

— Բարիզու լուսանկարի ընկերութիւնը այս ժամանակներս աշխարհահանգէս մը պիտի ընէ յորում պիտի ներկայացուին այս արուեստին բազմաթիւ ճիւղերուն մասերը: Այս ութերորդ անգամն է որ կ'ըլլուի այս ոճով: Այս հանգէսս պիտի ըլլայ Արուեստական պալատին մէջ՝ հանդերձ նկարչութեան աշխարհահանգէսով:

— Ի Հռովմ հնախօսական շատ կարևոր գիւտ մը գտնուեցաւ: Հին Հռովմայ հատակոտորներուն մէջէն ութը նոր յատակագիծներ գտնուեցան, զոր կարակալը մարմարիտի վրայ փորագրել տուած էր: Ապահովապէս այն մասին կը վերաբերին որ կապիտոլեան յատակագիծ (Pianta Capitolina) անուամբ կապիտոլեան թանգարանին սանդղոց պատերուն վրայ ստուերագրեալ են: Այս նոր հատակոտորներէս երկուքը նշանաւոր երկայնութիւն մը ունին, և ասոնցմէ մէկը յայտնապէս կը ներկայացնէ Լիւիուի կամարակապ սրահները (Porticus Liviae):